

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԵՎԵՐԵԿԻ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԵՎ
ԵՂԵՍԻԱՅԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Գևորգյան Գայանե

Հայ-ռուսական համալսարան,

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

gevgayane@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-08-0-29

Բանալի բառեր. խոսվածք, բարբառային միավոր, հնչյունա-
կան հարաբերություններ, երկհնչյուններ, խուլ բաղաձայններ:

Սևերեկ (ժողովրդական ստուգաբանությամբ՝ սև ավերակ) գյուղաքաղաքը գտնվում է Հայկական Միջագետքում՝ Դիարբեքի ի նահանգում՝ Տիգրանակերտ և Եղեսիա քաղաքների միջև: Ունեցել է 2500 հայ բնակիչ: 1915 թվականին՝ Մեծ եղեռնի ժամանակ, հայ բնակչության զգալի մասը զոհվել է Սևավերակում և Ուրֆա տանող ճանապարհին: Սևավերակը այժմ Թուրքիայի Ուրֆայի նահանգի Սիվերեք գավառի կենտրոնն է: Սևերեկի՝ Մեծ եղեռնից փրկված բնակիչները գաղթել և բնակություն են հաստատել աշխարհի տար-
բեր կողմերում, այդ թվում՝ նաև Արևելյան Հայաստանում, որոնց օգնությամբ էլ Հայերենի բարբառագիտական ատլասի (այսուհետ՝ ՀԲԱ) ծրագրով Անահիտ Հանեյանը 1978 թվականին Երևանում գրանցել է Սևերեկի խոսվածքը: Խոսվածքի նյութը տրամադրել է Օվսաննա Շուրմաշյանը՝ ծնված Սևերեկ քաղաքում 1909 թվակա-
նին: Մինչև 13 տարեկանը ապրել է ծննդավայրում՝ թուրքական մի-
ջավայրում, ապա 1921-22 թվերին մորաքույրը գտել է և տարել Սի-
րիա՝ Հալեպ: Գրեթե մոռացված բարբառը վերհիշել է մորաքրոջ հետ

¹Թ.Հակոբյան, Ստ. Մելիք-Բաշխյան, Հ. Բաբսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 4, Ե., 1998, էջ 582:

ապրած տարիներին: Ապա ամուսնացել է սևերեկցու հետ (բարբառախոսի վկայությամբ՝ ամուսինը շատ լավ է տիրապետել բարբառին), և ընտանիքում խոսակցական լեզուն ամուսինների միջև եղել է Սևերեկի խոսվածքը²:

Տիգրանակերտի բարբառ է կոչվում «Արևմտյան Հայաստանի Դիարբեքի նահանգի հայախոս բնակչության խոսվածքը: Բարբառի կենտրոնը Դիարբեքի քաղաքն է, որը հայերը անվանում են նաև Տիգրանակերտ»³: Բարբառը դասվում է արևմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտ բարբառախմբի մեջ՝ իբրև անկախ միավոր, առանձին բարբառ⁴:

Եդեսիայի բարբառով խոսել է պատմական Եդեսիա քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչությունը, որ 1915-ից հետո սփռվել է աշխարհով մեկ: Նրանց մի մասը բնակություն է հաստատել Հայաստանի Հանրապետությունում, որոնց օգնությամբ էլ Անահիտ Հանեյանը հավաքել է բարբառին վերաբերող փաստական տվյալները և քննել դրանք «Եդեսիայի բարբառը» մենագրության մեջ⁵: Եդեսիայի բարբառը, ըստ բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման, արևմտյան խմբակցության Համշենի կամ հյուսիսարևմտյան միջբարբառախմբի մեջ է խմբավորվում՝ իբրև առանձին բարբառ⁶:

Սույն հոդվածում կդիտարկենք Սևերեկի, Տիգրանակերտի և Եդեսիայի հնչյունական այն առնչությունները, որոնք ներկայանում են որպես ձայնավորական, բաղաձայնական, ձայնորդային և երկ-

² Ա. Հանեյան, *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր* (այսուհետ՝ ՀՖԱՆ), Սևերեկի խոսվածքը, 82:

³ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 5:

⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 134:

⁵ Ա. Հանեյան, *Եդեսիայի բարբառը*, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., 1982, էջ 184:

⁶ Տե՛ս նույն տեղում:

բարբառային զուգաբանություններ: Հիշյալ բարբառային միավորների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 3-ն էլ գտնվում են Հայկական Միջագետքում՝ հարևանությամբ, Սևերեկը՝ Տիգրանակերտ և Եդեսիա քաղաքների միջև:

Ինչպես նշեցինք, Տիգրանակերտի և Եդեսիայի բարբառները Ա. Հանեյանը հանգամանորեն նկարագրել է «Տիգրանակերտի բարբառը» և «Եդեսիայի բարբառը» մենագրություններում: Սևերեկի խոսվածքի վերաբերյալ փաստական տվյալներ առկա են միայն Ա. Հանեյանի՝ բարբառագիտական ատլասի ծրագրով լրացված «Սևերեկի բարբառը» աշխատանքում, ուստի սույն քննությունը կատարել ենք՝ վերոնշյալ ուսումնասիրություններում ներկայացված տվյալների հիման վրա:

Բարբառային 3 միավորների ձայնավորական համակարգը գրաբարի համեմատությամբ դրսևորում է որակային ու գործառական որոշ տարբերություններ: Ա և քմային *ա* հնչյունները Տիգրանակերտում և Սևերեկում հանդես են գալիս բնիկ և փոխառյալ միավանկ կամ բազմավանկ բառերի տարբեր դիրքերում, փակ, բաց, շեշտակիր կամ շեշտագուրկ վանկերում (վախնալ, սվլլղէլ, թախթէլ, կանգադ, տադդազ, մանգադ, տմբ, առնիլ են):

Առավել հաճախադեպ գործածություն ունի քմային *ա*-ն: Սևերեկում այն գործառում է *բ, գ, դ, ձ, ջ*-ից առաջացած խուլերից հետո (բամբակ-պամբազ, բարակ-պարազ, բարձ-պարջ, ձագ-ծաք, դարման-տարման են), *ւ, ն* ռնգայիններից առաջ (աման-աման, ամիս-ամիս, ամպ-ամբ, մանել-մանէլ, ցամաք-ցամաք են), ինչպես նաև շչականների հարևանությամբ (աշուն-աշունկ, խարշել-խաշէլ, խաչել-խաչէլ, քարշել-քաշէլ, արժել-աժէլ, խաչ-խաչ, ճանձ-ջանջ, չար-չար են): Որոշ բառեր քմայնացման օրինաչափություններին

⁷Քմային ա հնչյունը հոդվածում ներկայացվում է շեղատառ:

չեն ենթարկվում: Այսպես՝ **բան-սլան, դաս-տաս գանգատ-կանգատ, քամել-քամել համար-հըմար նշան-նիշան** բառերում ա-ի քմայնացում չի կատարվել:

Տիգրանակերտում ա-ն քմայնանում է ինչպես փոփոխության ենթարկված ձայնեղներից և խուլերից հետո (էրգաթ, քաշի «գարի», ցաք «ձագ», ջագաղ ևն), այնպես էլ փոփոխության չենթարկված շնչեղ խուլերից հետո (չաք, ցամաք, փախնիմ ևն): Սներեկում, ի տարբերություն Տիգրանակերտի, շնչեղ խուլերին հաջորդող ա ձայնավորը որոշ բառերում չի քմայնանում (չանչ, թարախ, ցախ ևն):

Վերոհիշյալ տարածքներում, ինչպես երևում է, խախտվում է Աճառյանի օրենքը՝ քմայնացած ա ձայնավորը գործածվում է փոփոխության չենթարկված շնչեղ խուլերից հետո, ինչպես նաև *ւ, ճ* ռնգայինների և շչականների հարևանությամբ: Եղեսիայի բարբառում ևս խախտվում է Աճառյանի օրենքը, թեև քմային ձայնավորի գործածությունը հաճախադեպ չէ՝ ի տարբերություն Տիգրանակերտի և Սներեկի: Այն գործառում է շչականներին, մասամբ էլ *ռ, ր* ձայնորդներին նախորդող դիրքերում (բաժանել-պաժնել, բանջար-պանջար, խաչ-խաչ ևն)¹⁰:

Այսպիսով, բարբառային 3 միավորներում էլ ա ձայնավորի քմայնացումը որոշ դեպքերում չի բացատրվում Աճառյանի օրենքով:

Սներեկում հին հայերենի *ռ* ձայնավոր հնչյունին համապատասխանող *օ*-ն գործառում է երկվանկ բառերի սկզբում (ոչխար-օշխար, ոջիլ-օճիլ, ռոնալ-օնալ, *ոսկի-օսկի*, որոճալ-օրօջալ ևն), հին հայերենի *բ, գ, դ, ձ, ջ*-ից առաջացած խուլերից հետո (բողկ-պօղգ,

⁸ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, էջ 33:

⁹ Հ. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 19-20:

¹⁰ Ա. Հանեյան, *Եղեսիայի բարբառը*, էջ 195:

գործ-կործ, դող-տող, գող-կող են), ինչպես նաև բառամիջի շեշտակիր (թոք-թոք, լող-լող, խոզ-խոզ, խոտ-խոտ, կոշտ-կոշտ, մոմ-մոմ, նոր-նոր, խմոր-խմոր, շնորհք-շնորհք, սղոց-սղոց, գոռալ-բոռալ, գովել-գովել են) և նախաշեշտ դիրքերում գտնվող *n*-ի դիմաց (թոնիր-թոնիր, ցորեն-ցորեն, փոխել-փոխել են): Միավանկ բառերը հատկանշվում են բառասկզբում $n > i/o$ հնչմամբ (որ-վոր, որբ-վորայ, ոխ-վոխ են):

Տիգրանակերտի բարբառում շեշտակիր վանկերում *n*-ին համապատասխանում է *nz* ձայնավոր միավանկ և բազմավանկ բառերում՝ փակ և բաց վանկերում (խոշոր-խոշոր, մոմ-մոմ, հոտ-հոտ են)¹¹: Այս երևույթը բացակայում է Սևերեկի բարբառում՝ բացառությամբ սակավաթիվ բառերի (մոմ-մոմ, խաղող-խաղուխ են)¹²: Եղեսիայում *n*-ի դիմաց շեշտակիր դիրքերում հատկանշական է երկբարբառային *in/i/o* հնչունակապակցության առկայությունը (ոսպն-վոսպ, խմոր-խմոր են): Շեշտանախորդ դիրքերում *n*-ն պարզ ձայնավորի արժեք ունի (ոռնալ-ոռնալ, գոտի-կողի են)¹³: Սևերեկում և Տիգրանակերտում բառասկզբում հինհայերենյան *z*-ի դիմաց գործածվում է *z* ձայնավոր (ելանել-էլլալ, երկու-երգու, երես-երես, երևալ-երեվալ, երկիր-երգիր, երկինք-երգինք են): *z*-ից առաջ գտնվող բառասկզբի *z*-ի դիմաց առկա է *z* կամ *j* ձայնավոր: **Երեկոյ-իրիկուն, երեք-իրեք, երիցակին-իրիսկին** բառերում $z > j$ հնչունական անցումն է գործում: Ըստ Հ. Մուրադյանի՝ «...այդ մի խումբ բառերը, որոնցում կատարվել է $z > j$ փոփոխությունը, ընդհանուր են բարբառների մեծագույն մասում», որը խոսում է այն մասին, որ «բառասկզբի *z*-ից առաջ *z*-ի կրած փոփոխությունը եղել է հնչունափոխական միասնական պրոցես և որ այն, ինչպես ցույց են տալիս

¹¹ Ա. Հանեյան, նշվ. աշխ., էջ 39:

¹² ՀԲԱՆ, Սևերեկ:

¹³ Ա. Հանեյան, *Եղեսիայի բարբառը*, էջ 196:

նան գրավոր աղբյուրները, բավական հին երևույթ է»¹⁴: **Երես-երես, երևիլ-երեվալ, երեկ-երեգ, երինջ-երինջ** և այլ բառերում **ե-ի** դիմաց առկա է է: Բառասկզբի **է-ի** դիմաց *ղ* ձայնորդից առաջ միայն **եղբայր** բառում է գործածվում *ա* ձայնավոր նաև Տիգրանակերտում (ախ-պառ)¹⁵: Հ. Մուրադյանը կարծում է, որ «երբ հին ե-ի դիմաց հանդիպում է ա, մենք գործ ունենք կամ փոխազդեցական հնչյունափոխության կամ բարբառային մի հին երևույթի հետ»¹⁶:

Շեշտակիր վանկում **ե-ն** Սևերեկում փոխարինվում է է-ով (թեփ-թեփ, խելք-խելք, հետ-հեղ, նեղ-նեղ, վեց-վեց, դեղ-դեղ, ցեց-ցեց են), Տիգրանակերտում՝ ի-ով (թել-թիլ, դեգ-դիգ, մեծ-մինձ, ասեղն-ասիղն են)¹⁷: Այս օրինաչափությանը Սևերեկում և Տիգրանակերտում չեն ենթարկվել գրաբարյան **է-ով** սկսվող միավանկ բառերը, որոնք ունեն նախահունչ *յ* (եզն-յեզ, ես-յես, երբ-յեպ են), ինչպես նաև այն բառերը, որոնցում **է-ն** ռձայնորդին նախորդող դիրքում փոխվել է ձայնավոր է-ի (սիսեռն-սիսեռ, ձմեռն-ծըմեռ, բեռն-պեռ, ձմեռն-ծըմեռ են): Եղեսիայում **է-ն** պարզ ձայնավորի արժեք ունի շեշտանախորդ դիրքերում (երկանք-երգանկ, դեղին-տեղին են)¹⁸:

Բարբառային 3 միավորներում էլ *ա* և *ի* ձայնավորները բոլոր դիրքերում անփոփոխ են (բուրդ-պուրթ, գունդ-կունդ, ձուկ-ծուգ, ջուր-ճուր թուշ-թուշ, թուր-թուր, սուգ-սուք, սուր-սուր, սուրբ-սուրպ, ուտել-ուդել, ուրիշ-ուրիշ, թի-թի, կծիկ-գրձիգ, կին-գին, կնիկ-գրնիգ, միս-միս, միտք-միդ, սիրտ-սիրդ, խնամի-խընամի են):

Ինչպես հայերենի գրեթե բոլոր բարբառներում, վերոնշյալ բարբառային միավորներում ևս հինհայերենյան երկբարբառները չեն պահպանվել. դրանց համապատասխանում են ձայնավորներ:

¹⁴ Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Ե., 1982, էջ 117:

¹⁵ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, էջ 35:

¹⁶ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 126-127:

¹⁷ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, էջ 36:

¹⁸ Ա. Հանեյան, *Եղեսիայի բարբառը*, էջ 196:

Այսպես՝ Սևերեկում հին հայերենի շեշտակիր և նախաշեշտ դիրքերում *ալ* երկրաբառի դիմաց առկա է քմային *ա* ձայնավոր (այծ-*ա*ծ, փայտ-փ*ա*ռ, տայգր-դ*ա*կըր, այրիկ-*ա*րիգ են), *ը* (այդ-ըդ, այլ-ըլ, այն-ըն, այսօր-ըսօր **են**), *է* (լայն-լեն, ծայր-ծեր, հայր-հեր, այրել-երվիլ քայլել-քելել են):

Եղեսիայում ևս *ալ* երկրաբառի դիմաց շեշտակիր դիրքերում առկա է քմային *ա* (այծ-*ա*ծ, այս-*ա*ս են), շեշտանախորդ դիրքերում՝ *է* ձայնավոր (այգի-էկկի, փայլիմ-փէլլալ են). «Այս առումով Եղեսիան մտնում է հայերենի բարբառների այն տարածքի մեջ, որում *ալ* երկրաբառը փոփոխության արդյունքով դիրքային տարբերակվածություն է դրսևորում: Հավանական է, որ *ալ-ը* շեշտակիր և ոչ շեշտակիր դիրքերում արտասանական որոշ տարբերություններ է ունեցել, որի հետևանքով էլ երկրաբառի պարզեցումը հանգել է տարբեր արդյունքի»¹⁹: Տիգրանակերտում *ալ* երկրաբառին թե՛ շեշտակիր և թե՛ նախաշեշտ դիրքերում համապատասխանում է *է* ձայնավոր (այս-էս, այրիկ-երիգ, տայգր-դէքըր են)²⁰:

Հայտնի է, որ ամենավաղ կատարված և համահայերենյան բնույթ ունեն *աւ>օ* և *էա>ե/է/* փոփոխությունները: Հիշյալ բարբառային միավորներում, ինչպես ողջ հայերենում, *աւ* երկրաբառի դիմաց առկա է *օ* (աւծել-օծել, աւրէնք-օրէնք, աւրհնել-օրնել են):

Եա երկրաբառի պարզեցումը Սևերեկում դրսևորվում է *էա>է* հնչյունական անցմամբ (ատեան-ադէն, լեառն-լէռ, կորեակ-գօրէգ, ցորեան-ցօրէն, սեաւ-սէվ, գրեաց-գըրէց, սիրեաց-սիրէց են), Տիգրանակերտում բառերի մեծ մասում՝ *էա-ի* փոփոխությամբ (կորեակ-գօրիգ, ցորեան-ցօրին, ատեան-ադին են)²¹: Եղեսիայում փակ վանկում *էա-ի* դիմաց առկա է *է* երկրաբառային հնչյունը (լեառն-լէռ,

¹⁹ Ա. Հանեյան, նշվ. աշխ., էջ 198:

²⁰ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, էջ 43:

²¹ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, էջ 42:

բաբեաւ-պարեւ կն)՝²² Հին հայերենի *իւ* երկբարբառի դիմաց բարբառային 3 միավորներում էլ համապատասխանում է *ի* ձայնավոր (ալիւր-ալիւր, արին-արին, հարիւր-հարիւր, հիւսել-հիսսել, եղբայրութիւն-ախպարութիւն, չորութիւն-չորութիւն, տերութիւն-դերութիւն կն)²³։ Սներեկը և Եդեսիան հատկանշվում են *ոյ>ո* (գոյն-քոն, թոյլ-թուլ, քոյր-քոր, գոյգ-գոկ կն) և *ոյ>ու* փոփոխություններով (անոյշ-անուշ, բոյն-բուն, կապոյտ-գաբուդ, լոյս-լուս, ոյժ-ուժ կն)։ Տիգրանակերտին բնորոշ է միայն *ոյ>ու* հնչյունափոխությունը թե՛ միավանկ, թե՛ բազմավանկ բառերում (անոյշ-անուշ, քոյր-քուր, բոյն-փուն, թոյլ-թուլ, ընկոյգ-ընկուգ, լոյս-լուս, ոյժ-ուժ կն)²⁴։

Սներեկում և Եդեսիայում բառասկզբի *բ, գ, դ, ձ, ջ*-ին համապատասխանում են *պ, կ, տ, ծ, ճ* խուլ հնչյուններ (բագուկ-պագուգ, գոգնոց-կոկնոց, դեղին-տեղին, ձմերուկ-ծըմբուկ կն)։ Դրանք շնչեղության թույլ երանգ ունեն հատկապես կիսաշփականների (ծ, ճ) դեպքում։ Գրաբարի ձայնեղների դիմաց բառասկզբում պարզ խուլերի առկայությունը համարվում է նախագրային շրջանից եկող 5-րդ դարի բարբառային հատկանիշ²⁵։ Ձայնեղների խլացման երևույթը Սներեկում և Եդեսիայում ընդգրկում է նաև միջձայնավորային, բառավերջի ետձայնավորային և *ր*-ին հաջորդող դիրքերը (խաբել-խապել, ուրագ-ուրակ, մեջ-մէճ, օձ-օծ, բարձ-բարծ, թրջել-տրրճել, ուրբաթ-ուրպատ, վարդ-վարտ, երդում-երտում կն), *ինչպես նաև դ>իւ*-ին հաջորդող դիրքում (աղբիւր-ախպիւր, աղջիկ-ախճիգ, եղբայր-ախպար, խեղդել-խըխտել, ողջ-վօխճ կն)։ Ըստ Ա. Հանեյանի՝ *ր*-ին հաջորդող դիրքերում Եդեսիայում ավելի հաճախ ձայնեղի դիմաց երևան են գալիս շնչեղ խուլեր (մարգարիտ-

²² Ա. Հանեյան, *Եդեսիայի բարբառը*, էջ 198։

²³ Նույն տեղում։

²⁴ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, էջ 45։

²⁵ Տե՛ս Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, էջ 268։

մաքրիդ, հարբիմ-հարփիլ են). «Ըստ երևույթին ձայնեղների դիմաց խուլերի առկայությունը նախապես հատուկ է եղել բոլոր դիրքերին, ապա ավելի ուշ ը-ին հաջորդող և բառավերջի ետձայնավորային, մասամբ նաև միջձայնավորային դիրքերում շնչեղացման պրոցես է սկսվել, սակայն չի հասել ամբողջական ավարտի, և արդյունքը եղել է այն, որ նշված դիրքերում ձայնեղի դիմաց գործառուում են և՛ պարզ, և՛ շնչեղ խուլեր»²⁶:

Տիգրանակերտի բարբառում հին հայերենի ձայնեղ պայթականներին և կիսաշփականներին համապատասխանում են շնչեղ խուլեր (բան-փան, դուռն-թոռ, ջուր-չուր են)²⁷: Ձայնեղները իրենց ձայնեղության որակը պահպանում են ռնգայիններին հաջորդելիս (սմբուլ-սըմբուլ, թանձր-թանձր, ամբար-ամբար են):

Համեմատաբար ուշ շրջանի երևույթ է համարվում խուլերի ձայնեղացումը, որը բարբառային 3 միավորների համար էլ ունի իր ամբողջական դրսևորումը. բացարձակ է բոլոր դիրքերի համար: Այսպես՝ բառասկզբի, բառամիջի միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող *ւյ, կ, տ, ծ, ճ* հնչյունները վերածվում են ձայնեղ *բ, գ, դ, ձ, ջ-ի* (պակաս-բագաս, կարաս-գարաս, ապուր -աբուր, շալիկ-շաբիգ, շիտակ-շիդազ, պատառ-բաղառ, հաւատ-հավադ, կուտ-գուդ են): Բացառություն են կազմում *սւյ, սկ, ստ, շտ* հնչյունակապակցություններում գործածվող խուլերը, որոնք հավանաբար խուլ շփականի փոխադրեցությամբ փոփոխության չեն ենթարկվում (նստիլ-նըստիլ, ոսկի-օսկի, ոսկոր-օսկօռ, աստառ-աստառ, հրեշտակ-հըրըշտազ են):

Բառասկզբի շնչեղ խուլերը բարբառային 3 միավորներում էլ անփոփոխ են մնում (չափել-չապել, քաղաք-քաղակ, փեթակ-փեթազ, քնել-քըննիլ են): Սներեկում և Եդեսիայում, սակայն, դրանք

²⁶ Ա. Հանեյան, *Եդեսիայի բարբառը*, էջ 201:

²⁷ Ա. Հանեյան, *Տիգրանակերտի բարբառը*, էջ 46-47:

հակում ունեն ապաշնչեղացման: Բառամիջի և բառավերջի *դիրքե-
րում*, ի տարբերություն Տիգրանակերտի բարբառի, շնչեղ խուլերը
վերածվում են խուլերի (եփել-էպել, աչք-աշկ, մութ-մուտ, մրափել-
մըրապել, խօսք-խօսկ, լուացք-վըլացկ են):

Շփական ջ, ճ, չ, ժ հնչյունները փոփոխության չեն ենթարկ-
վում (աշուն-աշունք, նշխարք-նըշխարք, չարչարել-չառչըրել, շուն-
շուն, փչել-փըճել են): Բառամիջի նախաբաղաձայնական դիրքում
հին կիսաշփականների դիմաց առկա են *ս, ջ, գ, ժ* շփական հնչյուն-
ներ (ամաչկոտ-ամըշկոդ, աչք-աշկ, խաճանել-խազնել, միջնակ-
միշնազ, ծածկել-ձազգել, կծկել-գըզգել, իրիցակին-իրիսկին են):

Բարբառային 3 միավորներում էլ շփականներին հատուկ են
հիմնականում դիրքային պայմանավորվածություն ունեցող հնչյու-
նափոխության որոշ դեպքեր: Այսպես՝ *զգ* հնչյունակապակցության
դիմաց Սներեկում և Եդեսիայում առկա է *սկ* կապակցությունը,
որում նախ կատարվել է *զ>կ* փոփոխությունը, ապա *կ*-ի առնմանու-
թյամբ *զ*-ն խլացել է՝ վերածվելով *ս*-ի (ազգ-ասկ, ազգական-
ասկազան, Վազգեն-Վասկեն են):

Տիգրանակերտի բարբառում Ա. Հանեյանը *զգ>սգ* փոփոխու-
թյունն է նշում՝ կատարելով հետևյալ դիտարկումը. «...ազգ>ասգ,
Վազգեն>Վասգեն բառերում նախ կատարվել է *զ>ք* օրինաչափ
հնչյունափոխություն, ապա *ք*-ի ետընթաց առնմանությամբ *զ*-ն
խլացել է՝ ասք. Սրան հաջորդել է *ս*-ի փոխադարձ առաջընթաց
առնմանությունը, որը *ք*-ին զրկել է շնչեղության հատկանիշից.
պարզ խուլի բացակայության պատճառով կրկին ձայնեղ է երևան
եկել *ք*-ի փոխարեն»²⁸:

Հ խուլ հնչյունը գործառում է բառի բոլոր դիրքերում՝ բառա-
սկզբում, բառամիջում, բառավերջում (հազ-հազ, հալել-հալել, հայ-

²⁸ Ա. Հանեյան, նշվ. աշխ., էջ 54:

հայ, հայելի-հէլլի, հաստ-հաստ, հիւանդ-հրվանդ, հոտել-հոդիլ, հոս-հոս, ռեհան-ռքհան են): «Հող» բառում առկա է *h>ju* հնչյունական անցումը՝ *juօղ*: *Iu* խուլ հնչյունը նույնպէս, գործածվելով բառի բոլոր դիրքերում, փոփոխություն չի կրում (խաղ-խաղալ, խեղճ-խեղջ, խեղդել-խըխտել, խրատ-խըրառ, ծախել-ձախել, նախիր-նախըր, գլուխ-կըլօխ են): 3 միավորներում էլ բառասկզբի հին հայերենի *խ*-ի դիմաց առկա է խուլ *h* (յիսուն-հիսսուն, յիշատակ-հիշադագ, Յակոբ-Հագօբ են): Որոշ բառերում նկատելի է *խ*-ի անկում գաղտնավանկի *ը*-ի պահպանմամբ (յստակ-ըստագ, յստակել-ըստըգել են): Պայթական և կիսաշփական հնչյուններից առաջ գտնվող *ը* ձայնորդը մնում է անփոփոխ (արծաթ-արծաթ, գորսկօրդ, վարտիք-վարդիգ են): *Լ* ձայնորդը նույնպէս փոփոխություն չի կրում՝ գործառնելով բառամիջի և բառավերջի դիրքերում (ախոռ-ախօռ, վառել-վառել, քառասուն-քառսուն, քուռակ-քուռոռագ են): Փոխազդեցական հնչյունափոխության է ենթարկվել բառամիջի *նլ* հնչյունակապակցությունը, որի դիմաց առկա է առնմանական *լլ* (անալի-ալլի, բանալի-պալլի, ելանել-ելլալ, լինել-լլիլ են):

Բարբառային 3 միավորներում էլ շեշտ ընդունում է բառի վերջնականի ձայնավորը: Ըստ Հ. Մուրադյանի՝ այս դեպքում փոփոխություն պիտի կրեր առաջին վանկի ձայնավորը, որը «հեռու լինելով շեշտակիր վանկից՝ ավելի էր ենթակա փոփոխության»²⁹: Սակայն փոփոխվում են շեշտակիրին նախորդող վանկի ձայնավորները. դրանք սղվում են կամ փոխարկում *ը*-ի (ամաչկոտ-ամըշկօղ, երկայնանալ-երգըննալ, թեթևանալ-թեթելնալ, վախենալ-վախնալ են): Եռավանկ բառերում առկա է ձայնավորների սղում (աղաջուր-ախճուր, առաջնակ-եռճինեգ, գողանալ-կօղնալ, թաթախել-թաթխել, լոգանալ-լօղընալ, բուսանել-պուսնիլ են):

²⁹ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 69:

Հ. Մուրադյանի կարծիքով՝ արևմտյան բարբառներում հնարավոր է, որ բազմավանկ բառերում հիմնական շեշտից բացի, լինել մի երկրորդական շեշտ, որը լինելով առաջին վանկում, թույլ չեր տալիս այդ վանկի ձայնավորի փոփոխություն:³⁰ Նախաշեշտ դիրքի *ա*-ն հիմնականում փոփոխության չի ենթարկվում (ասեղն-ասեղ, ծամել-ծամմել, ցանել-ցանել, քացախ-քացախ, կակուղ-գագուղ, կապել-գաբել են): Չի փոփոխվում նաև շեշտի տակ գտնվող *ա*-ն (աղ-աղ, աջ-աջ, թաս-թաս, թաթ-թաթ, մագ-մագ, մաղ-մաղ են):

Բարբառային 3 միավորներում առկա են բաղաձայնների անկման մի շարք դեպքեր: Հինհայերենյան *ն* վերջնահնչյունով միավանկ բառերը գործառույթում են առանց վերջնահնչյուն *ն*-ի (ամառն-ամառ, ատամն-ատամ, թոռն-թոռ, մութն-մութ, մուկն-մուկ են): Նկատելի է նաև *ր* ձայնորդի անկում որոշ բառերի բաղաձայնական կապակցություններում (բաղարջ-բաղաջ, խարշել-խաշել են):

Բարբառային 3 միավորներն էլ հատկանշվում են նաև հնչյունների հավելման դեպքերով: Պայթականներից ու կիսաշփականներից առաջ որոշ բառերում առկա է *ն*-ի հավելում (ամաչել-ամբշնալ, կանաչ-գանանչ, կտուց-գրդնոց, ճանաչել-ջանջրնալ, մեծ-մէնձ, մեք-մէնք են): Նր հնչյունակապակցության մեջ *դ*-ի հավելում է առկա *ծանր* և *մանր* բառերում և դրանով կազմված բաղադրություններում (ձանդրը, ձանդրբուտին, ձանդրբանալ, մանդրը, մանդրել են):

Այսպիսով, հնչյունական հատկանիշներով Սևերեկի խոսվածքը հարում է Եդեսիայի և Տիգրանակերտի բարբառներին՝ երբեմն այս կամ այն հատկանիշի սահմաններում երևան հանելով բարբառային տարբեր հատկանիշների զուգակցում, օրինակ՝ այ

³⁰ Հ. Մուրադյան, նույն տեղում:

երկբարբառի դիմաց առկա է *այ>ա* (Եդեսիա) և *այ>է* հնչյունափոխություն (Տիգրանակերտ): Խոսվածքը դրսևորում է նաև այնպիսի հատկանիշներ (շնչեղ խուլերին հաջորդող ա ձայնավորի՝ մի շարք բառերում չքմայնանալը, *էա>է* հնչյունական անցումը են), որոնք յուրահատուկ են և չեն հանդիպում նշված բարբառներում: Բաղաձայնական համակարգով խոսվածքը հարում է Եդեսիայի բարբառին. ձայնեղ պայթականների դիմաց առկա են խուլեր, որոնք շնչեղության թույլ երանգ ունեն, հատկապես կիսաշփականների դեպքում: Ի տարբերություն Եդեսիայի բարբառի՝ շնչեղ խուլերի ապաշնչեղացման երևույթը խոսվածքում ընդլայնված դրսևորում ունի: Երկբարբառների և *է* հնչույթի բացակայությամբ խոսվածքը հարում է Տիգրանակերտի բարբառին:

Gevorkyan Gayane-Observations about phonetic relationships of Severeke, Tigranakert and Edesia.-The phonetic relations of Severeke, Tigranakert and Edesia are considered in the article. The selection of the above-mentioned dialect units is due to the fact that all three dialect units are located in northern Mesopotamia in the neighborhood. By phonetic features, the speech of Severeke is similar to the dialects of Edesia and Tigranakert, sometimes within the boundaries of one or another sign, a combination of various dialectal features is manifested. for example, before the diphthong ai there is a phonetic change ай>a (Edesiya) and ай>e (Tigranakert).

Keywords: speech, dialect unit, phonetic relations, diphthongs, voiceless consonants.

Геворкян Гаяне-Наблюдения о фонетических взаимоотношениях Северека, Тигранакерта и Эдезии.-В статье рассматриваются

фонетических соотношениях Северека, Тигранакерта и Эдесии. Выбор вышеупомянутых диалектных единиц обусловлен тем, что все три диалектные единицы расположены в северной Месопотамии по соседству. По фонетическим особенностям **говор** Северека сходна с диалектами Эдесии и Тигранакерта, иногда в границах того или иного признака проявляется сочетание различных диалектных особенностей. например, перед дифтонгом *ai* есть фонетическое изменение *ai>a* (Эдесия) и *ai>e* (Тигранакерт).

Ключевые слова: говор, диалектная единица, фонетические отношения, дифтонги, глухие согласные.